

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտարարում է Հանձնաժողովում քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը որոշակի ժամկետով զբաղեցնելու մասին

#### Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության վերլուծության վարչության մուտքագրող (ծածկագիր՝ 42-26.2-Մ6-2)

Պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթներն են՝

- 1) իրականացնում է յուրաքանչյուր ընտրության տեղամասերի, առաջադրվող թեկնածուների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրումը ԸԱՀ:
- 2) իրականացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ նշանակելու հետ կապված տվյալների ներմուծում ԸԱՀ, ստանում է տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերը և տրամադրում է տարածքային ընտրական հանձնաժողովին:
- 3) իրականացնում է ընտրողների ստորագրված ցուցակների սկանավորման, տեխնիկական սարքավորումներից դուրս բերված տեղեկությունների վերբեռնման աշխատանքներ ընտրողների կենտրոնացված տեղեկատվական համակարգ (CVIS):
- 4) իրականացնում է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների մասնակցության հայտերի ընդունում:
- 5) մասնակցում է Հանձնաժողովի և համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի (հանձնաժողովների) միջև իրականացվող փաստաթղթա-չրջանառության, էլեկտրոնային գործավարության կազմակերպման և առաջացած փաստաթղթերի արխիվացման աշխատանքներին:
- 6) մասնակցում է ընտրությունների անցկացման ժամանակահատվածում դիտորդների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվական բանկի ստեղծմանը:
- 7) ընտրական գործընթացի ավարտից հետո նախապատրաստում է հաշվետվություններ՝ տարածքային ընտրական հանձնաժողովի փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ:
- 8) իրականացնում է տարածքային, տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների և տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետների աշխատավարձերի վճարման համար հիմք հանդիսացող սկզբնական ցուցակների կազմումը:
- 9) իրականացնում է տարածքային ընտրական հանձնաժողովին հանձնված գույքի հաշվառման և պահպանման ապահովումը:
- 10) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքներ:

## **Նշված պաշտոնը որոշակի ժամկետով զբաղեցնելու համար պահանջվում է՝**

- առնվազն միջնակարգ կրթություն.

• Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

• **Վինդուզ XP, Վորդ, Էքզել, Աքսես համակարգչային ծրագրերով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն և նախնական գիտելիքներ համակարգչային ցանցերի վերաբերյալ, ինչպես նաև պաշտոնի անձնագրով անհրաժեշտ /ընդհանրական և ընտրանքային/ կոմպետենցիաների տիրապետում.**

Պայմանագիրը կնքվում է մինչև ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացումը /2021թվականի հունիսի 9-ը/:

**Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է՝ 2021 թվականի մարտի 29-ը ներառյալ, ժամը 9<sup>30</sup>-ից մինչև 12<sup>30</sup>-ը, բացառությամբ ոչ աշխատանքային օրերի:**

**Աշխատավարձը՝** համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի, կազմում է 111 115 (հարյուր տասնմեկ հազար հարյուր տասնհինգ) դրամ:

**Աշխատանքի վայրը՝** Հայաստան, Արմավիրի մարզ, ք. Արմավիր, թիվ 16 տարածքային ընտրական հանձնաժողով, հեռ.+374237 22153, էլեկտրոնային փոստի հասցե՝ Tec16@elections.am:

Պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակը՝ հարցազրույց:

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում ([ձևը կցվում է](#)),
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (ները),
- արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ կամ համապատասխան տեղեկանք.
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- անձնագիր (նույնականացման քարտ) և անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը,
- մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացիները կենտրոնական ընտրական հանձնաժողովում քաղաքացիական ծառայության՝ որոշակի ժամկետով թափուր պաշտոն զբաղեցնելու համար փաստաթղթերը կարող են ներկայացնել անձամբ կամ էլեկտրոնային փոստի միջոցով (ք. Երևան, Գ. Քոչար 21ա, հեռ. 010-54-52-47, անձնակազմի կառավարման բաժին կամ [cec@elections.am](mailto:cec@elections.am)):